

ՋԵԿՈՒՑԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՐՔԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐԻ ԵՎ ԱԿԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ 2015 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարգելի Ա.Թովմասյան, համազորացիներ և հյուրեր, թույլ տվե՛ք ձեր ուշադրությանը ներկայացնել 2015 թվականի 1-ին կիսամյակում գյուղապետարանի աշխատակազմի, իմ և ավագանու կողմից կատարված աշխատանքները :

Նախապես ցանկանում եմ ձեզ տեղեկացնել, որ համայնքի բնակչության թիվը կազմում է 1839, տնտեսությունների թիվը՝ 307:

2015 թվականի 1-ին կիսամյակում Զրարքիի գյուղական համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին որոշումներ կայացնելուց առաջնորդվել են հրապարակայնության, մատչելիության և թափանցիկության սնկզբունքներով, հնարավորինս փորձել են մեծացնել համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը, բնակիչները հնարավորություն են ունեցել սպառիչ տեղեկանալ գյուղապետարանի գործունեության մանրամասներին:

2015 թվականի առաջին կիսամյակում կատարվել են աշխատանքներ, որոնք նպաստել են բնակչության սոցիալ- տնտեսական մակարդակի բարձրացմանը:

Ստորև ներկայացվում է 2015 թվականի 1-ին կիսամյակում կատարած աշխատանքները և դրանց ֆինանսավորման համար ծախսված միջոցները :

Համայնքում 2005 թվականից գործում է մանկապարտեզ, հաճախում են 68 երեխա: Մանկապարտեզն ամբողջությամբ ֆինանսավորվում է համայնքի բյուջեի միջոցների հաշվին: Տարեսկզբին հաստատված նախահաշվի համաձայն համայնքի բյուջեից որպես ընթացիկ անհատույց վճարներ՝ ծառայության մատուցում՝ »Զրարքի համայնքի մանկապարտեզ« համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը 1-ին կիսամյակում հատկացվել և ամբողջությամբ փոխանցվել է 3690000/ երկր միլիոն վեց հարյուր իննսուն հազար/ դրամ գումար: Մանկապարտեզի աշխատանքները պարբերաբար վերահսկվում են գյուղապետարանի կողմից: Գյուղապետարանը հնարավորինս աշխատում է հոգալ մանկապարտեզի խնդիրները:

2015 թվականի ընթացքում ավագանու որոշմամբ համայնքում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, որոնք սկսած 2005 թվականից վերածվել են գեղեցիկ ավանդույթների.

1-ին միջոցառումը, որի ընդհանուր գումարը կազմում էր 598000/հինգ հարյուր իննսունույթ հազար/ դրամ, գյուղապետարանը կազմակերպեց Կանանց միջազգային օրվա՝ մարտի 8-ին կապակցությամբ:

Միջոցառման ժամանակ համայնքի թվով 77 կին թոշակառուներից յուրաքանչյուրին տրամադրեց 5200 / հինգ հազար երկու հարյուր / դրամ արժողության նվերներ: Նույն օրը՝ միջոցառման ժամանակ գյուղապետարանը

համայնքի միջնակարգ դպրոցի ուսուցիչների թվով 27 կին և մանկապարտեզի թվով 11 կին աշխատակիցներին նույալնս նվիրեց 5200 / հինգ հազար երկու հարյուր / դրամ արժողությամբ նվերներ: Տոնի առթիվ նվերներ տրամադրվեց նաև համայնքում միակ կին ազատամարտիկին և միակ կին ավագանու անդամին, բուժկնտի 2 աշխատակիցներին և փոստային կապի բաժանմունքի աշխատակցին:

2-րդ միջոցառումը կազմակերպվեց Հաղթանակի և խաղաղության տոնի՝ Մայիսի 9-ի կապակցությամբ: Միջոցառմանը հրավիրված էին Ղարաբաղյան պատերազմին մասնակցած համայնքի ազատամարտիկները:

Միջոցառման կազմակերպման համար համայնքի բյուջեից հատկացվեց 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ գումար:

Միջոցառում կազմակերպվեց նաև Վերջին զանգի կապակցությամբ: Համայնքի թվով 9 շրջանավարտների նվերների համար գյուղապետարանը հատկացրեց 99000 /իննսունհինգ հազար/ դրամ:

Հունիսի 1-ին՝ երեխաների պաշտպանության օրվա կապակցությամբ համայնքում կազմակերպվեց երկու ժամյա միջոցառում: Հրավիրված էին հինգ հեքիաթի հերոսներ: Միջոցառման կազմակերպման համար փոխանցվել է 55000/ հիսունհինգ հազար/ դրամ:

1-ին կիսամյակում գյուղապետարանը 130000 / մեկ հարյուր երեսուն հազար/ դրամ հատկացրեց համայնքի միջնակարգ դպրոցի բոլոր դասարաններին պատմամշակութային օջախներ այցելելու և էքսկուրսիաներ կազմակերպելու համար:

2015 թվականի առաջին կիսամյակում գյուղապետարանին պատկանող ՎՍՁ2106 մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման և զազով լիցքավորելու համար ծախսվել է 286561 / երկու հարյուր ութսունվեց հազար հինգ հարյուր վաթսունմեկ/ դրամ :

Համայնքի ավագանու որոշմամբ ամսական 900000 /ինը հարյուր հազար/ դրամի պայմանագիր է կնքվել Ջրարբի համայնքի բնակիչ Ս.Բաղդասարյանի հետ, ըստ որի համայնքում յուրաքանչյուր շաբաթ, շաբաթական երկու անգամ, իրականացվում է աղբահանման աշխատանքներ, որի արդյունքում մաքրվել են համայնքի փողոցներն ու մայրթեղերը: Աղբահանման աշխատանքների դիմաց վարձատրությունն ամբողջությամբ կատարվում է գյուղապետարանի միջոցներով: 2015թվականի 1-ին կիսամյակում աղբահանման աշխատանքների դիմաց վճարվել է 490800/ չորս հարյուր իննսուն հազար ութ հարյուր / դրամ գումար:

Դեռ 2014 թվականի 2-րդ կիսամյակից սկսվեց համայնքի Մշակույթի տան վերանորոգման աշխատանքները, այն ամբողջությամբ վերանորոգվեց, 2015թվականի առաջին կիսամյակում ավարտվեց կոսմետիկ վերանորոգման աշխատանքները, որի համար ծախսվել է 842930/ութ հարյուր քառասուներկու հազար ինը հարյուր երեսուն / դրամ: Այժմ ընթացքի մեջ է <<Ջրարբիի մշակույթի

տուն>> ՀՈԱԿ-ի պետական գրանցման , կնիքի ձեռքբերման և շահագործման աշխատանքները:

2015 թվականի առաջին կիսամյակում համայնքի ավագանու որոշմամբ սկսվել է ցանկապատման աշխատանքեր: 2000000 /երկու միլիոն / դրամ գումար է հատկացվել գյուղապետարանի, բուժ.կետի, մշակույթի տան և մանկապարտեզի տարածքները ցանկապատելու համար: Ներկա պահին դեռ շարունակվում են ցանկապատման աշխատանքները:Ընդհանուր հատկացված երկու միլիոն դրամից ծախսվել է 1774270 .մեկ միլիոն յոթ հարյուր յոթանասունչորս հազար երկու հարյուր յոթանասուն/ դրամ գումար:

1-ին կիսամյակում համայնքի բնակիչների առաջարկությամբ իրականացվել կոյուղագծերի մաքրման աշխատանքներ, որի արդյունքում ամբողջությամբ մաքրվեցին կոյուղագծերը: Նշված աշխատանքերի համար համայնքի բյուջեից ծախսվել է 146000 /մեկ հարյուր քառասունվեց հազար/ դրամ գումար:

Գարնանաային անձրևների հետևանքով համայնքամիջյան փողոցներում առաջացել էին ջրափոսեր, որոնք խոչընդոտ էին հանդիսանում ճանապարհային երթևեկությանը: Խնդիրը լուծելու համար առաջին կիսամյակում ծախսվել է 267600 /երկու հարյուր վաթսունյոթ հազար վեց հարյուր դրամ:

1-ին կիսամյակում համայնքի թվով 7 ընտանիքների իրենց դիմումների համաձայն տրամադրվել է սոցիալական օգնություն՝ ընդամենը 330000 / երեք հարյուր երեսուն հազար/ դրամ:

2009 թվականից համայնքում ձևավորվել է մի ավանդույթ, ըստ որի հարազատին կորցրած ընտանիքներին տրամադրվում է 50000/ հիսուն հազար/ դրամ օգնություն, 2015 թվականի 1-ին կիսամյակում հարազատին կորցրած 4/չորս/ ընտանիքի տրամադրվել 200000 /երկու հարյուր հազար / դրամ օգնություն:

2015 թվականի 1-ին կիսամյակում համայնքի բյուջեից 3 ընտանիքի հատկացվել է ֆինանսական աջակցություն 129100 / մեկ հարյուր քսանինը հազար հարյուր/դրամի գումար: Մեկ ընտանիքի տրամադրվել է դրամական աջակցություն 29100 դրամ՝ << Հայաստանի ԴՕՍԱԱՖ >> ՀԿ-ի << Էջմիածնի ավտոդպրոց >> ՄՊԸ –ում սովորելու ճանապարհաձախսը ապահովելու համար, իսկ պտտահողմի հետևանքով տուժած երկու ընտանիքի տրամադրվել է դրամական աջակցություն 100000 /մեկ հարյուր հազար/ դրամի չափով գումար:

2015 թվականի 1-ին կիսամյակում բնակիչների պահանջով գրվել է 206 տնդնկանք:

2015 թվականի 1-ին կիսամյակում տնդի է ունեցել 7 ավագանու նիստ, , որտեղ քննարկվել են համայնքին վերաբերող տարաբնույթ հարցեր, ինչպես նաև սոցիալական ապահովության կարիք ունեցող բնակիչների դիմումները: 1-ին կիսամյակում ընդունվել է 30 որոշում:

2015 թվականի Ջրարբի բյուջեով հաստատվել է 33614400/ երեսուներեք միլիոն վեց հարյուր տասնչորս հազար չորս հարյուր / դրամի նկամուտ, մուտքագրվել է 18276700 / տասնույթ միլիոն երկու հարյուր յոթանասունվեց հազար յոթ հարյուր / դրամ, որը կազմում է ընդհանուր բյուջեի 54.37 %-ը:

Պնտական բյուջեից համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և մուտքագրված գույքահարկի, հողի հարկի, այլ ոչ հարկային նկամուտների, վարձակալական հողի հարկի և տնդական տուրքերի գանձման արդյունքում մուտքագրվել են հետևյալ նկամուտները՝

2015 թվականի 1-ին կիսամյակում մուտքագրվել են հետևյալ եկամուտները՝

Գույքահարկ շենքերի և շինությունների և փոխադրամիջոցների	3650.0 - 2497.5 - 68.42%
Գյուղ. նշ. հողերից հողի հարկ	2335.0 - 1249.3 - 53.50%
Վարձակալական հողի հարկ	210.0 - 50.9 - 24.23%
Տնդական տուրք	200.0 - 142.3 - 71.15%
Դոտացիա	26969.4 - 14336.7 - 53.15%
Տեղական վճար	100.0 - 0 - 0 %
Գույքի վարձակալություն	150.0 - 0 - 0 %

2015 թվականի 1-ին կիսամյակում կատարվել են հետևյալ ծախսերը՝

Աշխատավարձի համար հատկացվել է 13608700/տասներեք միլիոն վեց հարյուր ութ հազար վեց հարյուր / դրամ գումար, ծախսվել է 5101300 / հինգ միլիոն հարյուր մեկ հազար երեք հարյուր / դրամ գումար:

Էլեկտրաէներգիայի համար հատկացվել է 1000000/մեկ միլիոն / դրամ գումար, ծախսվել է 385800 / երեք հարյուր ութսունհինգ հազար ութ հարյուր / դրամ գումար:

Աղբահանության համար հատկացվել է 1000000 / մեկ միլիոն / դրամ գումար, ծախսվել է 490800/ չորս հարյուր ինսուն հազար ութ հարյուր / դրամ գումար:

Կապի ծառայությունների համար հատկացվել է 150000/մեկ հարյուր հիսուն հազար / դրամ գումար, ծախսվել է 80000 / ութսուն հազար / դրամ գումար:

Ապահովագրական ծախսերի համար հատկացվել է 30000/երեսուն հազար/ դրամ գումար, սակայն չի ծախսվել:

Ներքին գործուղման համար հատկացվել է 100000/մեկ հարյուր հազար / դրամ գումար, սակայն չի ծախսվել :

Համակրգչային ծառայությունների համար հատկացվել է 300000/ երեք հարյուր հազար / դրամ գումար, ծախսվել է 109900/ մեկ հարյուր ինը հազար ինը հարյուր/ դրամ գումար:

Տեղեկատվական ծառայությունների համար հատկացվել է 200000/երկու հարյուր/ հազար դրամ գումար, ծախսվել է 108280/մեկ հարյուր ութ հազար երկու հարյուր ութսուն հազար / դրամ գումար:

Ներկայացուցչական ծախսերի համար հատկացվել է 1450000/մեկ միլիոն չորս հարյուր հիսուն հազար / դրամ գումար, ծախսվել է 723000 / յոթ հարյուր քսաներեք հազար / դրամ գումար:

Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների համար հատկացվել է 9946000/ինը միլիոն ինը հարյուր քառասունվեց հազար / դրամ գումար, ծախսվել է 5139600/ հինգ միլիոն հարյուր երեսունինը հազար վեց հարյուր / դրամ գումար:

Մասնագիտական ծառայությունների համար հատկացվել է 600000 / վեց հարյուր հազար / դրամ գումար, ծախսվել է 46630/ քառասունվեց հազար վեց հարյուր երեսուն / դրամ գումար:

Ընթացիկ նորոգման և պահպանման համար հատկացվել է 500000/ հինգ հարյուր հազար/ դրամ գումար, ծախսվել է 92650 / իննսուներկու հազար վեց հարյուր հիսուն/ դրամ գումար:

Գրասենյակային նյութերի համար հատկացվել է 500000 / հինգ հարյուր հազար/ դրամ գումար, ծախսվել է 282560/ երկու հարյուր ութսուներկու հազար հինգ հարյուր վաթսուն / դրամ գումար:

Տրանսպորտային նյութերի համար հատկացվել է 700000 / յոթ հարյուր հազար/ դրամ գումար, ծախսվել է 286560/երկու հարյուր ութսունվեց հազար հինգ հարյուր վաթսուն / դրամ գումար:

Կենցաղային և հանրային սննդի համար հատկացվել է 200000/ երկու հարյուր հազար / դրամ գումար, ծախսվել է 70000/ յոթանասուն հազար/ դրամ գումար:

Սոցիալական օգնության համար հատկացվել է 1200000/ մեկ միլիոն երկու հարյուր հազար / դրամ գումար, ծախսվել է 659100/ վեց հարյուր հիսունինը հազար հարյուր/ դրամ գումար:

Շենքերի և շինությունների կառուցման համար հատկացվել է 2000000/երկու միլիոն/դրամ գումար, ծախսվել է 1387500/մեկ միլիոն երեք հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր / դրամ գումար:

Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման համար հատկացվել է 2000000/ երկու միլիոն / դրամ գումար, ծախսվել է 1113100/մեկ միլիոն հարյուր տասներեք հազար հարյուր / դրամ գումար:

Վարչական սարքավորումների համար հատկացվել է 506000/ հինգ հարյուր վեց հազար/ դրամ գումար, ծախսվել է 81000/ութսունմեկ հազար/ դրամ գումար:

Ոչ նյութական հիմնական միջոցների համար հատկացվել է 30000/ երեսուն հազար/

Ջրաբքի համայնքում առկա և լուծման անհրաժեշտություն ունեցող ծախսատար խնդիրները հետևյալն են՝

1. Համայնքի փողոցների ասֆալտապատում
3. Դպրոցի շենքի վերանորոգում:
4. Մանկապարտեզի շենքի վերանորոգում
5. Մշակույթի տան կահավորում:

Ջրաբքի համայնքի ղեկավար՝



Ղ.Ղազարյան